

Իսկ այլազգիք Երուսաղէմի յետ գործելոյ զայսպիսի անգթութիւնս, ժողովեալ մեծամեծաց նոցին գրեցին գիր գանգատանաց առ Ֆաթիմեան Խալիֆայն Եգիպտոսի Հաքիմ պի էմիր Ուլլահ, եւ ամբաստան եղեն զքրիստոնէից թէ ժողովեալ յաւուր ճրագալուցի Զատիկին 'ի տաճարին Ս. Յարութեան, բարձեալ զխաչս եւ զգիրս իւրեանց բարձրագոյն ազադակեն, եւ անուանեն զօրն զայն չարաթլուսոյ, եւ զայլս այսպիսիս որք հակառակ են օրինաց մերոց: Եւ ընթերցեալ Հաքիմայ զգիրս նոցա, հրաման արար կործանել զեկեղեցին զայն, զսարսաւ եւ զգանձս նորին առնուլ յաւարի. ԿՁԼ (1007):

Այլ իբրեւ յաջորդեաց յաթոռ Խալիֆայութեան թոռն նորա Մուսթանսր Պիլլահ, խնդրեաց Կայսր Յունաց տալ թոյլ ինքեան շինել եւ նորոգել զտաճարն Ս. Յարութեան յերուսաղէմ, զոր աւերեաց Հաքիմ. եւ ինքն արձակեսցէ զ5000 Արաբացի գերիս: Իբրեւ յանձն առ Խալիֆայն, կատարեաց Կայսրն զխոստումն իւր արձակելով զգերիսն, եւ առաքեաց գանձ բազում յերուսաղէմ, եւ նորոգեաց զեկեղեցին, զի ոչ իսպառ աւերեալ էին զայն: Իսկ-էւ-ձեկէ-Հար. Ս. 268: ՀԿԿ. (1036):

Զդիպուածս՝ զոր գրեցաք 'ի վեր անդր, առեալ եղաք 'ի պատմագրութենէ Արաբացւոց հանդերձ թուականաւ նոցին: Սակայն այլք այլ իմն եղանակաւ յառաջ բերեն զայն, այսպէս «Սա այս Հաքիմ յամի 1009, աւերեաց զգերեզման Փրկչին. եւ թէ մայր նորա, որ էր քրիստոնեայ, կանգնեաց զորմունս այսր եկեղեցւոյ»: Ոմանք եւս ասեն, թէ որդի Խալիֆային Եգիպտոսի 'ի ստիպելոյ Արկիրոբոլի եթող քրիստոնէից պարտակել զՍրբազան վայրս 'ի նոր շինուածի: Բայց որպէս առ թագաւորութեամբ Հաքիմի քրիստոնեայք Երուսաղէմի չէին ըստ բաւականին հարուստ, եւ ոչ յաջողակ 'ի շինել զկերտուածն որ ծածկէ այսօր զԳողգոթայն. եւ թէ Մարիամ կին Հաքիմի եւ մայր նորա Խալիֆայի՝ արար զծախսն, եւ թէ օգնական եղեւ նմա յայսմիկ բարեպաշտ գործս Կոստանդիանոս Մոնումախոս: Իսկ Մարինոս Լատին՝ այսպէս ասէ, «Քրիստոնեայք ողորմութեամբ եւրոպայի, մանաւանդ Կոստանդիանոս դքսին եւ Մոնումախոս Կայսեր շինեցին զչորրիւ մասն պարսպին Երու-